ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՈՂԲԸ» ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆ Է, ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԸ ԱՂԵՐՍՆԵՐ ՈՒՆԻ ՆՐԱ ՀԵՏ

Կանխապես նկատենք, որ հայոց միջնադարյան ողբը իր տեսակի մեջ ամենահին և հարուստ պատմությունն ունի: Այն իր հոգևոր սնունդը ստացել է Աստվածաշնչից, Երեմիայի ողբից, և ազգային գաղափարական նպատակասլացությամբ ու բազմաբնույթ բովանդակությամբ ներկայացնում է քրիստոնյա հայության գեղարվեստական գրականության մի հին և ինքնատիպ բաժինը:

Մինչև բուն խնդրին անդրադառնալը, նկատենք նաև, որ հայոց միջնադարյան ողբը մարդու կատարելության, նրա հոգեկան և իմացական ներաշխարհն արտացոլելու, նրա բնական և ստացական պահանջմունքների միջև ներդաշնակություն ստեղծելու հուզալեցուն արտահայտչամիջոց է, ինքնաքննադատանքի, զղջման, մտքի և սրտի ձայն հառաչանաց: Այդպես են ընկալել ողբը 5-18-րդ դարերի հայ նշանավոր պատմագիրները, իմաստասերները, բանաստեղծները, անվանի գրիչները, այդպես է ընկալել և ողջ ժողովուրդը ու սիրել, տարածել այն:

Ուշագրավ է, որ հայոց ողբի տեսական, գիտական սահմանումը մենք հանդիպում ենք դեռևս Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» էջերում: Ի՞նչ շահ կարող է բերել վհատությունը, հուսալքումը, գրում է հանճարեղ քնարերգակը, երբ խոսքի խարանով մարդու մահացու վերքի շարավն ամբարված, կամ ծանրությունը մթերված սրտի դուրս չթափվի իսպառ՝ խորին գիտությամբ, հնարամտությամբ «գգվանօք», «մատնամխությամբ».

Իսկ արդ, զի՞նչ բարւոք գոյ առ այս,
Եւ կամ ո՞ր աւգուտ ինձ առ սոյն՝
Զայս սահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել,
Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վէրիս
Խառանաւ բանիս արտաքս հերքել,
Եւ կամ ծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան
խիթոյս,
Իբր տաղտկացուցանողական հնարամտութեամբ,
Մատնամուխ գգւանաւք փսխել[1]:

Այդպես է բնութագրում ողբի հիմնական, բուժիչ դերը հայ քնարերգության հանճարը, և տեսական այսօրինակ ըմբռնումն է իշխում ազգային քնարերգության մեջ ի սկզբանե՝ ներառյալ նոր ժամանակները:

Հայտնի է, սակայն, որ «ողբ, ողբերգություն» բառերը, իրենց բուն ազգային նշանակությամբ, գրական ստեղծագործության մեջ առաջին անգամ օգտագործել է Մովսես Խորենացին. «Զմտաւ այսոսիկ ածելով, հառաչումն յիս ի ներքս ընթանայ և արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան տխրական և սգաւոր: Եւ ոչ գիտեմ, եթէ զի՞արդ յարմարեցից զողբերգութիւնս և կամ զով արտասուեցից»[2]: Այսպես է բնութագրում ողբի դերը Մովսես Խորենացին: Զարմանալիորեն, ինչպես նկատեցինք, տեսական այս նույն գաղափարներն են շոշափվում նաև նոր ժամանակներում. «Ի զկրից առաջանաց կարիմք ունենալ, – գրում է Կ. Պոլսի Պատրիարք, նարեկագետ, գիտնական, բանաստեղծ Հակոբ Նալյանը, – զներքին զցաւս սրտից...ի խորոց սրտէ առ նա առանց զգալի ձայնի»[3]: Այն սոսկ ձայն չէ մարմնական, առանց մտաց, բացատրում է Նարեկի մեկնիչը, կարծեք թե նաև տարբերելու համար հայոց դասական ողբը նախաքրիստոնեական լալյաց երգերից: Հիրավի, առանց վարանելու կարելի է ասել, որ սա դասական ողբը հեթանոս երգերից տարբերելու տեսական ճշմարիտ

---

[1] Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985 թ., էջ 266:

[2] Մ. Խորենացի, «Հայոց պատմութիւն», Վենետիկ, ի վանս Մխիթարեանց, 1881 թ., էջ 678:

[3] Հակոբ Նալյան, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1757, էջ 13:

ընդհանրացում է, որ կատարել է 18-րդ դարի նշանավոր լուսավորիչ Հակոբ Նալյանը: Տարակուսանքից վեր է, նաև, որ թե՛ Նարեկացին և թե՛ Նալյանը, ողբի հարցին անդրադառնալիս, առաջին հերթին աչքի առաջ են ունեցել Մովսես Խորենացու «Հայց պատմութիւն»-ը և նրա եզրափակիչ «Ողբը»: Հիրավի, հայոց դասական ազգային ողբի հիմնադիրը հանճարեղ Քերթողհայրն է: Նա իր «Հայոց պատմութիւն» անգերազանցելի աշխատությունը եզրափակում է ողբով: Հայտնի է նաև, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը» հույժ կարևոր և բացառիկ սկզբնաղբյուր է ոչ միայն հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը ուսումնասիրելու, այլ նաև հարևան ժողովուրդների պատմության կարևոր շատ հարցեր լուսաբանելու համար: Հիրավի, հայ ժողովրդի հնագույն դարերի լուռ ու անխոս պատմությունը վերակենդանացնելու, նրան ազգային, կենսական, խորունկ շունչ ու ոգի ներարկելու համար մենք պարտական ենք Խորենացու հանճարին: Ավելին, Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը **հայ ժողովրդի նախաքրիստոնեական դարավոր կյանքի գիտական հայտնությունն է և, միաժամանակ, քրիստոնյա հայության ազգային մաքառողական կյանքի, նոր վերածննդի ծրագիրը, ուղենիշը՝ մաշտոցյան հանճարեղ գրերի գյուտից ի վեր, ներառյալ մեր ժամանակները:**

Գիտական ամեն մի հարցի պատմությունն առավել քան հիմնավոր, առավել քան խորունկ և ամբողջական է դառնում, երբ այն քննական, աղբյուրագիտական ուսումնասիրության է ենթարկվում դարից-դար՝ առանձին-առանձին և դարերի՝ միմյանց հետ ունեցած կապի մեջ: Այս դեպքում ավելի քան պարզորոշ է դառնում, թե տվյալ դարը ի՞նչ է ստացել նախորդ դարերից, ի՞նչ է ստեղծել ու զարգացրել և ի՞նչ է փոխանցում հաջորդ դարերին:

Այդ դարերի անթիվ ու անհամար պատմա-քնարական ինքնուրույն և մեկնողական բազմատեսակ մեծ ու փոքր երկերի՝ ներբողների, շարականների, աղոթքների, երկտող և քառատող բանաստեղծությունների վրա, առավելապես 11-րդ դարից ի վեր, այս կամ այն չափով, նկատելի է Մովսես Խորենացու «Ողբի» և Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ազդեցությունը: Ի՞նչ երևույթ է սա, որո՞նք են՝ ազգային, կրոնա-բարոյագիտական, կենսական այն հայացքները, որոնք թույլ են տալիս համադրելու 5-րդ և 10-րդ դդ.

հանճարների ստեղծագործությունները: Մեզ հայտնի չէ որևէ փաստ կամ ակնարկ այն մասին, թե Նարեկացուն ծանոթ է եղել Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը»: Սակայն անառարկելի են և ակներև այդ երկու հանճարների երկերի միջև եղած գաղափարական աղերսները, կապը: Ա՛րդ, որոնք են այդ առնչությունները: Ամենաբնորոշ և ընդհանրական առանձնահատկությունը, որ կա Խորենացու ու Նարեկացու վերոհիշյալ երկերի մեջ, դա նրանց ինքնադատանքի գիծն է, քննադատական արվեստի առանձնահատկությունը: Հայոց բազմահարուստ պատմության մեջ Խորենացին է առաջին հանճարեղ պատմագիրը, և Նարեկացին՝ առաջին հանճարեղ բանաստեղծը, որոնց գրչի տակ անողոք քննադատությամբ, ինքնատիպ և բարձր արվեստով արտացոլվում է կյանքը լայն առումով՝ իրավա-տնտեսական, կրոնա-քաղաքական, կրոնա-եկեղեցական, բարոյագիտական, կրթական, լուսավորական և այլ առումներով: Լայնահուն այս ընթացքի մեջ երկու հանճարների ստեղծագործությունների բուն կենտրոնում կանգնած է կենդանի մարդը, բոլոր շնչավոր էակների առաջնորդը, բանական գոյը, «զարդը տիեզերաց», ինչպես բնութագրում է հանճարեղ Դավիթ Անհաղթը: Բանական մարդը սակայն, որը տարաբախտաբար հեռացել է իր սահմանից, ցավով ընդգծում են երկու հանճարները. մարդ-բանականը ոտնահարել է բնության, կյանքի, Աստծո պարգևած շնորհները ու հավասարվել անբաններին, մեղանչել հոգու և մարմնի միության ներդաշնակության վեհ գաղափարի դեմ...

Եթե Խորենացին իր ազգի անցած դարերի պատմությունը հանգամանալից շարադրելուց հետո միայն դառնորեն ողբում է հայոց քրիստոնեական առաջին ինքնուրույն պետականության անկումը և անհուն վշտով շարադրում իր ողբը, ապա Նարեկացին ընդհանրացնում է այդ դարերից ի վեր մեծ մասամբ օտար տիրապետությունների լծի տակ տառապող իր ժողովրդի ծանր կացությունը և հենց նույն ցավի տառապանքից, նույն գաղափարների մղումով արձագանքում Խորենացու ողբին... Հատկապես Նարեկացու «Մատեան ողբերգութեան» Ղ բանքում հայ մարդու նույն ազգային տառապանքներն է հաղորդում ընթերցողին, ինչ նա զգում է Խորենացու ողբը ընթերցելիս:

Ուշագրավ է նաև այն, որ երկու հանճարներն էլ նույն եզրակացությանն են հանգում. մարդն ինքն է իր մեղքերի խորին պատճառը, մարդ-բանականի ազգային ինքնաճանաչման անկումը, ժողովրդի ազգային միաբանության նվազումը, բացակայությունն է անկման եզրին հասցնում հայ ժողովրդին, քայքայում նրա պետականությունը, մեռցնում նրա հավատը: Երկու ողբերի մեջ էլ հենց այն գաղափարն է մարմնավորվում, թե չքացել է Աստված-բանական մարդ-բանական ըմբռնումը, մինչդեռ մարդն է Աստծո պատկերը երկրի վրա: Զարմանալիորեն այս ըմբռնումն է իշխում միջնադարյան ողջ գեղարվեստական գրականության մեջ, որը գալիս է Խորենացու ողբից և ավելի զարգանում Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մեջ: «Զի եթէ վասն բանին մենք որպէս ասի պատկեր Աստուծոյ, - գրում է Խորենացին, - և դարձեալ առաքինութիւն բանականին է խոհականութիւն և քո այսոսիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմն զգեղեցիկ մտածութեամբ խոհականութեանն քո վառ և բորբոք պահելով զարդարեա զբանն, որով մնաս առ լինելն պատկեր»[4], բնութագրելով Սահակ Բագրատունուն, ընդգծում է Խորենացին:

Հայտնի է, որ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունումից ի վեր /301 թ./, հատկապես 4-5-րդ դարերից, հուժեղանում էին քրիստոնյա Եկեղեցու դեմ նաև հերձվածողական, աղանդավորական շարժումներն ու պայքարը: Եզնիկ Կողբացին, Մաշտոցը՝ իր աշակերտներով, Մովսես Խորենացին և այլ նշանավոր լուսավորիչներ միասնաբար մաքառում են այդ աղանդների դեմ: 10-րդ դարում այդ պայքարը ծանր բնույթ է ստանում: Գրիգոր Նարեկացին Թոնդրակյան աղանդի հետևորդներին «Մատեան ողբերգութեան» ԼԱ, ԼԷ, ՂԱ, ՂԳ բանքերում, ինչպես նաև Արմաշի վանահորը գրած «թղթում» Նրանց կոչում է զրպարտիչներ և թշնամիներ քրիստոնեական ուղղափառ հավատքի.

Զրպարտիչների զենքերը հատեն.
Ընկնեն սրերը մահ տարածողի...
Թոր երեսպաշտի կեղծ կերպարանքն իր բուն տեսքն ստանա,
Ջախջախվեն մոլի հարձակումները ստահակների,

---

[4] Մ. Խորենացի. «Հայոց պատմութիւն», էջ 573:

Ցիրուցան լինեն ուտիծիչների տարմերն անպակաս,
Պառակտված ցրվեն հրոսակները ավազակների,
Քայքայվեն խուժդուժ բարբարոսների հորդաները խուլ,
Բարձրացողները կեղծ դրոշների լինեն ջարդուփուրդ,
Մի ճամփով եկած, յոթով ետ փախչեն...
Կտրվի կապը միաբանության,
Հանապազաջան ավազակների...
Խոշտանգիչների նետարձակումները անհետ խափանվեն,
Սասանվի նավը խարդախողների,
Եվ ատամները կծոտողների՝ արմատահանվեն...[5]

Հայոց վերածննդի այս գաղափարները իրենց նորանոր արտահայտությունները ստացան հետագա բոլոր դարերում: 11-18-րդ դարերում հիրավի չկա մի աչքի ընկնող գործիչ, որն անմասն մնացած չլինի հայոց երկու հանճարների՝ Խորենացու և Նարեկացու համատեղ ազդեցություններից՝ այս կամ այն չափով:

17-18-րդ դարերում, երբ հայոց համար ազգային նոր և ընդհանուր վերածննդի ժամանակաշրջանն էր սկսվել, առավել քան ուժեղանում է Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» ազդեցությունը՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հետ մեկտեղ: Այս հանգամանքը բնականաբար ներազդում է դարի ոչ միայն պատմագիտության, այլ նաև փիլիսոփայության, գեղագիտության, հնագրագիտության, բանաստեղծության և գրական արձակի զարգացման ընթացքի վրա:

18-րդ դարի նշանավոր բանաստեղծներ Բաղդասար Դպիրը, Մխիթար Սեբաստացին, Հակոբ Նալյանը, Ղազար Ջահկեցին, Պետրոս Նախիջևանցին, Պետրոս Ղափանցին, Պողոս Կաղզվանցին և ուրիշներ ստեղծում են քնարական և պատմա-քնարական բազմաթիվ բանաստեղծություններ, ողբեր, արձակ էջեր, որոնք ամրապնդում են աշխարհացրիվ հայության մեջ հավատը, հայրենիք, կրոն, գիտություն և միասնական գաղափարախոսությունը: Ողբը այդ դարերում դառնում է հայ ժողովրդի պայքարի ու ազատության կոչ: Ղազար Ջահկեցին իր «Ողբ ի վերա Հայաստան աշխարհի» բանաստեղծության մեջ Խորենացու «Հայոց պատմության», «Ողբի» հենքի

---

5 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», էջ 381:

վրա արդար պատերազմի մարտահրավեր է անում, հրապարակախոսական մեծ շնչով բարձրացնում հայ ազգի պետականության փառքը և հույս հայտնում, թե կգան նոր Արշակունիներ, նոր զորավարներ ու քաջ իշխաններ: Նորից կծնվեն աղեղնավոր Հայկը, գեղեցկատեսիլ Տիգրանը, «Տիեզարասասան Արշակը», «Արիական Վաղարշակը», «Քաջն Վարդանն» ու նրա մյուս զինակիցները և կփրկեն հայոց աշխարհը՝ «Համայն զաշխարհն Հայաստան»:

Մի այլ հարց ևս: Խորենացին և Նարեկացին միաժամանակ նույն հետաքրքրությունն ու սերն են ցուցաբերում նաև նախաքրիստոնեական շրջանի հեթանոս երգերի նկատմամբ: Մովսես Խորենացին առաջինն է, որ «Հայոց պատմութեան» մեջ ընթեցողին ծանոթացնում է հեթանոս երգերին, զրույցներին, առասպելներին: Նարեկացին «Մատեան ողբերգութեան» ԻԶ բանքի առաջին հատվածում նույնպես անդրադառնում է հեթանոս երգերի հարցին և մեկնաբանում նրանց արվեստի առանձնահատկությունները՝ սիրով ու համակրանքով.

Եւ արդ, ստուգապէս եւ իրաւաբար ընդ որս,
Որք ըստ ձայնից կողկողանաց
Եւ զբանիցն յարմարութիւն հանդերձեն՝
Ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն,
Որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն
Զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս,
Ուստի եւ բազմեալ իմ ի գլուխս պարու ակմբից դասու այնր
երախանաց,
Որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն
Եւ ես ընդ նոսին նոցին հեծութեամբ, աւաղական
ձայնարկութեամբն:

Հաջորդ հարցը, որով առնչվում է Խորենացու «Հայոց պատմությունը» Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հետ՝ վերաբերվում է աղանդավորական շարժման պատմությանը: Երկու հանճարներն էլ նույն ցավով են ընդգծում քրիստոնեական կրոնի դեմ մղվող աղանդավորական շարժման ոտնձգությունները: Խորենացին իր «Ողբում» անհուն կսկիծով գրում է. «Այժմ մարդք ի ներքուստ եւ

արհաւիրք արտաքուստ, արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց»[6]:

18-րդ դարի դասական բանաստեղծությունը ևս հիմնական գծերով կրում է Մովսես Խորենացու և Գրիգոր Նարեկացու ոչ միայն գաղափարական ազդեցությունը, այլև նրանց քերթողական արվեստի զորեղ ուժը.

Պատմողական այսմիկ տառիս,
Ականջադրուկ թէ եղիցիս,
Ղօղեալ գործոց մերոց տոհմիս,
Տեղեակ ոմանց առ լինիցիս,

գրում է Բաղդասար Դպիրը՝ բացահայտելով այն մեծ կարևորությունը, որ ունի ազգային պատմության ուսումնասիրության հարցը: Երգիչը իր ժողովրդի կյանքն ու գործը, նրա դարերի անցած ճանապարհն իմանալու, ճանաչելու պատգամ է հղում իր ժամանակակիցներին.

Քերթողահայր մեծն Մովսէս,
Էր սերընդմամբ ի հայ ազգէս,
Ցորմէ ուսաք մեք վարժապէս,
զքերթութեան ազնիւ հանդէս:

Բանաստեղծը մի քառատողում բնութագրում է հանճարեղ Խորենացու Հայոց պատմության ուղենշային դերը ինչպես ժողովրդի ազգային հայրենասիրական գրականության պատմության զարգացման գործում, այնպես էլ գեղագիտական մտածողության նոր ձևերի, քերթողական ինքնատիպ արվեստի զարգացման գործում: Այս առումով փայլուն օրինակը կարող է լինել նաև Կոմիտաս Քյոմուրճյանի ստեղծագործությունը: 19-րդ դարի վերջի և 18-րդ դարի առաջին հիսնամյակի նշանավոր բանաստեղծ և եկեղեցական-քաղաքական գործիչ Կոսիտաս Քյումուրճյանը իր «Ողբերգական աղաւմունք» քնարական հուզալեցուն բանաստեղծության մեջ հայոց ժամանակակից քաղաքական կյանքի ծանր վիճակը՝ «թշվառությունն ազգիս» ողբալու համար դարձյալ դիմում է անցյալին: Երեմիան և Խորենացին են ձայնակցում նրան օտարի բռնակալության դեմ պայքարելու, հայոց անհուն վիշտը ողբալու համար.

---

6 Մ. Խորենացի, «Հայոց պատմութիւն», էջ 411:

Զարթի՛ր Երեմիա և ողբս յօրինէ,
Արտասուօք ողբա և զմեզ աւաղէ,
Զի կորովի ազգն մեր ողբոց արժան է.
Վասն այնու ողբամ և յորդ արտասուեմ:
Առ ընդ քեզ ողբակից մեր Խորենացին,
Լէր լալակից նմա ողբօք դառնագին,
Աւա՜ղ, ափսոս ասա մեր հայոց ազգին,
Վասն այնու ողբամ և յորդ արտասուեմ:

Կոմիտաս Քյոմուրճյանը ևս հայոց ընդհանուր իշխանությունը ողբալու համար դիմում է անցյալ դարերի մեծն ողբասացներին, «Քանզի կորովի ազգն մեր ողբոց արժան է»՝ այս եզրահանգումով: Երեմիան, Խորենացին, Նարեկացին պիտի ձայնակցեին 18-րդ դարի երգչին՝ հայոց անհուն վիշտը նորովի ողբալու համար: Բանաստեղծը վերակենդանացնում է Մովսես Խորենացու ողբի ցավը, կսկիծը և միաժամանակ բարձրացնում նրա քննադատական ողբի ձայնը՝ ինչպե՞ս պատահեց այս բոլորը, ո՞րն է մեր ազգի ամենամեծ սխալը, չէ որ անվանի էին բոլոր ազգերի մեջ, չէ որ փայլում էին «իբրև ակունք»: Բանաստեղծը հայոց անկման ամենամեծ պատճառը համարում է ազգի անմիաբանությունը, որը և Խորենացու ողբի ամենամեծ ցավն է: Այո, Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» ողբը հայ ժողովրդի միաբանության, ինքնաճանաչման գաղափարի, ինքնուրույն, անկախ պետականություն ունենալու գաղափարի գրական հիմն է, որ հնչել է բոլոր դարերում և հնչում է մինչև այսօր:

Շուշանիկ Նավարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր,
գիտության վաստակավոր գործիչ